



# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2020 թ.

N 263-Ա

ք. Ստեփանակերտ

### ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌՋԵՎ ԿԱՆԳՆԱԾ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ, 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Կորոնավիրուսի տարածման հետևանքով աշխատանքի շուկայում դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած Արցախի Հանրապետության քաղաքացիներին, ովքեր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա աշխատանքային հարաբերությունների մեջ են գտնվել մասնավոր հատվածի գործատուի հետ (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատների, ապահովագրական ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի, ներդրումային ֆոնդերի, ներդրումային կազմակերպությունների, վիճակախաղերի և շահումով խաղերի կազմակերպիչների և այլ նմանատիպ գործունեություն ծավալողների) և աշխատանքից ազատվել են 2020 թվականի մարտի 1-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում և այդ նույն ժամանակահատվածում չեն անցել մեկ այլ աշխատանքի, տրամադրել միանվագ ֆինանսական աջակցություն՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված աջակցությունը տրամադրվում է այն քաղաքացուն, ով չի հանդիսացել Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 15-ի N 262-Ա որոշմամբ հաստատված N 2 հավելվածով նախատեսված միջոցառման շահառու:

2.1. Սույն որոշման առաջին կետում նշված աջակցությունից չեն կարող օգտվել այն անձինք՝

1) ով 2020թ. մարտի 31-ի (ներառյալ) դրությամբ աշխատանքային հարաբերությունների մեջ է գտնվել նաև այլ գործատուի հետ կամ նույն գործատուի հետ՝ այլ աշխատանքային պայմանագրի հիման վրա.

2) 2020թվականի մարտի 31-ի(ներառյալ) դրությամբ հանդիսացել էանհատ ձեռնարկատեր, ում գործունեությունը նույն ամսաթվի դրությամբ Արցախի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով դադարեցված չի եղել:

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությանը տրամադրել 2020 թվականի մարտի 1-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակաշրջանում աշխատանքից ազատված Արցախի Հանրապետության քաղաքացիների մասին տեղեկությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**